# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԳՈՐԾԻՔ՝ gaia.am

Գյուղատնտեսական արտադրության մի շարք արժեշղթաներում տնտեսությունների կազմակերպման և կառավարման գործընթացում ուղեցուցային հաշվարկները հասանելի են gaia.am կայքում: Նախնական խորհրդատվության տրամադրման նպատակով մշակվել են ***ֆինանսական կանխատեսումների և հաշվարկների գործիքներ՝ ոչխարաբուծության, խոտաբույսերի և հատիկաընդեղեն մշակաբույսերի, մեղվապահության, խաղողագործության, ջերմատնային տնտեսությունների, հատապտուղների այգիների, մրգային հատապտուղների, անասնապահության և բանջարեղենային մշակաբույսերի համար:*** Գործիքները կիրառելի են գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության մի շարք ծրագրերից օգտվող շահառուների, ինչպես նաև՝ ոլորտի այլ տնտեսավարողների համար:

Մասնավորապես այս գործիքների միջոցով օգտագործողին հնարավորություն է տրվում ներմուծել մուտքային տեղեկատվությունը և ստանալ տնտեսությանն առնչվող ***հիմնական գործառնական ծախսերի ու ակնկալվող եկամուտների վերաբերյալ հաշվետվություններ***:

Ուղեցույցում ներառված տեղեկատվությունն ունի խորհրդատվական և կողմնորոշիչ բնույթ, իսկ առավել մանրամասն հաշվարկների ստացման նպատակով խորհուրդ է տրվում դիմել մասնագետների: